ՏՐԱՆՍ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մայիս - Հունիս - Հուլիս 2020

Հ. 13

COVID-19-Ի ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՆՍ ԱՆՁԱՆՑ ՎՐԱ----------2
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԵԴԻԱ-ԱՐՇԱՎ IDAHOT-ԻՆ ՆՎԻՐՎԱԾ----------3
ԱՌՑԱՆՑ ՀԱՐԹԱԿՈՒՄ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԿԱՆԱՆՑ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԸ----------4
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՆՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ----------5
ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԿՆՈՋ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԸ----------6
ՀԱՄԱՏԵՂ ՎԵԲԻՆԱՐՆԵՐԻ ՇԱՐՔ----------7
ԹՎՈՎ 3-ՐԴ և 4-ՐԴ ՎԵԲԻՆԱՐՆԵՐԸ----------8
ՄԵՔՍ-ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ COVID-19-Ի ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ----------9
ԹԵԺ ԳԻԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ----------10
ՎԵԲԻՆԱՐ ՀԱՄԱՐ 5----------11
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՍԵՐԸ ՍՐՏՈՒՄ, ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԿՂՈՒՄ----------12
ԹԵԺ ԳԾԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ----------13

COVID-19-Ի ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՆՍ ԱՆՁԱՆՑ ՎՐԱ

Կորոնավիրուսի (COVID-19) սոցիալական հետևանքների վերաբերյալ հարցում տրանսգենդեր համայնքի ներկայացուցիչների շրջանում:
Հարցման նպատակն է պարզել, թե տրանսգենդեր համայնքի ներկայացուցիչներից քանիսն են հանդիսանում պետական աջակցության ծրագրերի շահառու, և թե ինչ սոցիալական ազդեցություն են ունեցել կորոնավիրուսի համաճարակի առաջացրած սահմանափակումները տրանսգենդեր համայնքի վրա:

Հարցումներն իրականացվում են անանուն և գաղտնի, միայն վերլուծություն իրականացնելու նպատակով: Ստացված տեղեկատվությունը հրապարակվելու է ապահովելով հարցազրույցին մասնակցած անձանց անձնական տվյալների գաղտնիությունը, անձնական տվյալները չեն պահպանվելու և չեն տրամադրվելու երրորդ անձանց, չեն հրապարակվելու առանձին կամ համապարփակ տեղական կամ միջազգային զեկույցներում:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԵԴԻԱ-ԱՐՇԱՎ IDAHOT-ԻՆ ՆՎԻՐՎԱԾ

Ամբողջ աշխարհն այսօր նշում է հոմոֆոբիայի, տրանսֆոբիայի, բիֆոբիայի և ինտերֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրը: Մենք դեռևս նշում ենք այս օրը, քանի որ աշխարհում ատելությունն ու վախերը և դրանցով դրդրված հանցագործությունները արժանի հատուցում չեն ստացել, քանի որ վախն ու ատելությունը շարունակում են մեզ ուղեկցել մեր կյանքի գրեթե ոլորտներում: Ինչպես ամեն տարի այս տարի ևս «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն նշում է այս օրը աշխարհի բոլոր ԼԳԲՏ+ համայնքի ներկայացուցիչների, նանց հարազատների և ընկերների հետ միասին, գոտեպնդելով նրանց և բարձրացնելով տրանս ու ԼԳԲ համայնքի հիմնախնդիրները, դարձնելով դրանք առավել հասանելի ու լսելի հասարկության մնացած անդամների համար:

Ցավոք սրտի այս տարի կորոնավիրուսի համաճարակով պայմանավորված մենք հնարավորություն չունենք ապահովելու մեր տեսանելիությունը փողոցներում, սակայն դա չի նշանակում, որ մենք գոյություն չունենք: Արդեն երկու շաբաթ շարունակ ԻԿՀԿ նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը կազմակերպում է առցանց հանդիպումներ տրանս համայքնի ներկայացուցիչների հետ ուղիղ եթերի ֆորմատում և այդ եթերների ընթացքում բարձրաձայնում տրանս համայքնի առավել ցայտուն խնդիրների մասին և փորձում գտնել դրանց հանարավոր լուծումները: Այս տարի մենք առանձնացրել ենք Լիլիթ Մարտիրոսյանի հյուրընկալած տրանս ակտիվիստների երազանքները և նպատակները #instatrans կոչվող եթերների ժամանակ: Ուրախ ենք ներկայացնել ձեզ 6 խիզախ տրանս ակտիվիստների մեջբերումներ, որոնց կարող եք ծանոթանալ այս նկարներում:

ԱՌՑԱՆՑ ՀԱՐԹԱԿՈՒՄ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԿԱՆԱՆՑ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԸ

Ապրիլի 23-ին «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ էին դիմել տրանսգենդեր կանայք՝ Պ.-ն և Ա. Ղ-ն, հայտնելով, որ ֆեյսբուք և ինստագրամ սոցիալական ցանցերում մի շարք անձինք հրապարակել են իրենց անձնագրերի լուսանկարները՝ ածնագրային տվյալներով:

Այդ գործողությունների արդյունքում տրանսգենդեր կանայք ենթարկվել են առցանց հարթակում խտրականության և ատելության կոչերի, ստացել են բազմաթիվ սպառնալիքներ, ծաղրական և վիրավորական մեկնաբանություններ:

Այդ կապակցությամբ ԻԿՀԿ-ն հաղորդում էր ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին հանցագործության վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 144-րդ հոդվածով նախատեսված՝ Մարդու անձնական կամ ընտանեկան գաղտնիք համարվող տեղեկություններն առանց նրա համաձայնության տարածելու համար:

Հաղորդման հիման վրա հարուցվել է քրեական գործ, մասնավորապես՝ Նարեկ Մալյանի կողմից տրանսգենդեր Է.Պ.-ի անձնական տվյալները ապօրինի կերպով տարածելու համար:
Նշված արարքը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով:
Այս և այլ գործերի մանրամասներին ծանոթանալու համար հետևեք սոցիալական ցանցերի մեր պաշտոնական էջերին և կայքի տեղեկատվությանը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՆՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ

Հարգելի՛ տրանս համայնք,

Ինչպես արդեն հայտնի է բոլորիս, երկրում արտակարգ դրության հաստատման պատճառով տրանս համայնքի շատ ներկայացուցիչներ չեն կարողանում վաստակել իրենց գոյատևման համար անհրաժեշտ միջոցներ, իսկ պետական աջակցությունից օգտվել չեն կարող սահմանված չափանիշներին չհամապատասխանելու պատճառով:

Ուստի, «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն իր պատրաստակամությունն է հայտնում աջակցելու տրանս համայնքի ներկայացուցիչներին կորոնավիրուսի սոցիալական հետևանքների հաղթահարման համար: Մենք օգնություն ենք տրամադրելու միայն այն անձանց, ովքեր գտնվում են ծայրահեղ ծանր վիճակում և այլ միջոցներից աջակցություն չեն ակնկալում, չեն ստացել աջակցություն նախկինում այլ կազմակերպություններից կամ պետությունից:

Ծրագիրը կարճաժամկետ է և նախատեսված է բացառապես տրանս համայնքի ներկայացուցիչների համար:

Միջոցների սղության պատճառով յուրաքանչյուր ոք, ով տվյալ ծրագրի շահառու կհանդիսանա, երկրորդ անգամ ծրագրին դիմելու հնարավորություն չի ունենա:

Ծրագրի շրջանակներում մենք կհոգանք տրանս համայնքի առաջին անհրաժեշտության կարիքները՝ բնակարանի վարձակալություն (մասամբ), կոմունալ վճարներ, սնունդ, սանիտարահիգիենիկ պարագաներ և այլն:

ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԿՆՈՋ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԸ

2020թ. մայիսին «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ էր դիմել մարզաբնակ տրանսգենդեր կին Լ.-ն, ով ընտանիքում պարբերաբար էր ենթարկվում բռնության՝ իր գենդերային ինքնության պատճառով: Վերջինիս խնդրանքով ԻԿՀԿ-ն աջակցել էր նրան Երևան տեղափոխվելու հարցում:

Հունիսի 5-ին՝ ուշ երեկոյան, «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը հեռախոսազանգ է ստանում տրանսգենդեր Լ.-ից, ով հայտնում է որ տրանսգենդեր Լ.-ի ընտանիքի անդամները հայտնաբերել են իր բնակության վայրը և սպառնում են, որ դուրս չգալու դեպքում կկոտրեն դուռն ու կսպանեն իրեն:

Լիլիթ Մարտիրոսյանն ահազանգում է ԻԿՀԿ փաստաբանին, որն էլ իր հերթին ահազանգում է ոստիկանություն: Ոստիկանությունը ժամանում է տրանսգենդեր Լ.-ի բնակարան, որտեղից վերջինիս հարազատները բերման են ենթարկվում ոստիկանության բաժանմունք:

Ոստիկանության բաժանմունքում փաստաբանի օգնությամբ տրանսգենդեր Լ.-ն հարձակման վերաբերյալ դիմում է ներկայացնում և հեռանում ոստիկանության բաժանմունքից:

Ոստիկանության բաժանմունքը լքելիս տրանսգենդեր Լ.-ի հայրը փորձել է հարձակվել Լ.-ի և ԻԿՀԿ փաստաբանի վրա, սակայն ԻԿՀԿ փաստաբանը կանխել է հարձակումը:
Տրանսգենդեր Լ.-ն այս պահին ապահով տարածքում է և բանակցում է ընտանիքի անդամների հետ:
«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն սոցիալական աջակցության ծրագրի շրջանակում կտրամադրի աջակցություն տրանսգենդեր կնոջը:

Այս և այլ գործերի մանրամասներին ծանոթանալու համար հետևեք սոցիալական ցանցերի մեր պաշտոնական էջերին և կայքի տեղեկատվությանը:

ՀԱՄԱՏԵՂ ՎԵԲԻՆԱՐՆԵՐԻ ՇԱՐՔ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում Սեքս-աշխատողների իրավունքների պաշտպանության կազմակերպությունների ցանցի SWAN - Sex Workers' Rights Advocacy Network-ի հետ համատեղ սկսել է վեբինարների շարք «Համայնքային հեռանկարներն ու արձագանքները տարածաշրջանում՝ սեքս-աշխատողների նկատմամբ հանցավորության, բռնության, խտրականության և բռնաճնշումների վերաբերյալ» թեմայով: Վեբինարներից առաջին 2-ն արդեն բարեհաջող իրականացվել են:

Վեբինարների ընթացքում տրանսգենդեր սեքս աշխատող ակտիվիստները սովորում են իրենց իրավունքների և դրանց կիրառման մեխանիզմների մասին, գիտելիքներ են ձեռք բերում ամենատարբեր հարթակներում սեփական իրավունքների համար պայքարելու վերաբերյալ, ինչպես նաև որոշումների կայացման գործընթացներում ներգրավված լինելու կարևորության մասին:

Վեբինարների շարքը վարում են SWAN-ի կողմից հավաստագրված փորձագետներն ու դասընթացավարները, ովքեր, սեփական և համայնքային փորձի վրա հիմնվելով, հայ տրանսգենդեր սեքս աշխատող ակտիվիստներին են փոխանցում իրենց գիտելիքները ոչ ֆորմալ կրթության և ինտերակտիվ քննարկումների միջոցով:

Վեբինարների շարքը հաջողությամբ յուրացրած և ավարտած մասնակիցները SWIT(Sex Workers Implementation Tool) գրքում ներառված գործիքներն օգտագործելու հնարավորություն կստանան՝ մասնակցելով SWAN-ի կողմից տրամադրված դրամաշնորհի հետագա գործընթացներին:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն բարձր է գնահատում SWAN-ի հետ համագործակցությունը և հպարտությամբ է նշում, որ արդեն 2 տարի շարունակ հանդիսանում է SWAN-ի անդամ՝ պայքարելով սեքս աշխատողների իրավունքների հավասարության համար Հայաստանում և միջազգային հարթակներում:

ԹՎՈՎ 3-ՐԴ և 4-ՐԴ ՎԵԲԻՆԱՐՆԵՐԸ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում Սեքս-աշխատողների իրավունքների պաշտպանության կազմակերպությունների ցանցի (SWAN)-ի հետ համատեղ իրականացրեց թվով 3-րդ և 4-րդ վեբինարները «Համայնքային հեռանկարներն ու արձագանքները տարածաշրջանում՝ սեքս-աշխատողների նկատմամբ հանցավորության, բռնության, խտրականության և բռնաճնշումների վերաբերյալ» թեմայով:

Վեբինարների թեմաները առավելագույնս արդիականացված և համապատասխանեցված են հայ տրանսգենդեր սեքս աշխատողների համար:
Այս դասընթացների առաջին փորձագետներն էին Լեգալայֆ-Ուկրաինա բարեգործական կազմակերպության տնօրեն Իսաևա Նատալիան և նույն կազմակերպության խորհրդի ղեկավար Ֆիսկովա Ելենան, ովքեր հմտորեն փոխանցեցին իրենց գիտելիքները և փորձը «Բռնությունների փաստագրում և հավաքագրված տվյալների օգտագործում» թեմայի վերաբերյալ, տրանսգենդեր սեքս աշխատող ակտիվիստներին, իսկ վերջիններս ինտերակտիվ քննարկումների միջոցով ստացան իրենց հուզող հարցերի պատասխանները:

Հաջորդ դասընթացի թեման «Համայնքային ծառայություններ»-ն էին, որը վարում էր «Տաիս Պլյուս» կազմակերպության տնօրեն Ճահնազ Իսլամովան: Ինտերակտիվ քննարկումների և բազմաբովանդակ սահիկների միջոցով մասնակիցները ծանոթացան Ղրղզստանի համայքնահեն ծառայություններ մատուցելու փորձին և նրբություններին, դասընթացի ավարտին մասնակիցները տվեցին վեբինարի ընթացքում առաջացած հարցերը, իսկ դասընթացավարը դրանց բավարարող պատասխաններ տվեց:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն բարձր է գնահատում SWAN-ի հետ համագործակցությունը, և նշում, որ արդեն 2 տարի շարունակ հանդիսանում է SWAN-ի անդամ՝ պայքարելով սեքս աշխատողների իրավունքների հավասարության համար Հայաստանում և միջազգային հարթակներում:

ՍԵՔՍ-ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ COVID-19-Ի ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Հուլիսի 2-ին «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում Սեքս-աշխատողների իրավունքների պաշտպանության կազմակերպությունների ցանցի (SWAN) աջակցությամբ իրականացրեց սեքս-աշխատողների խնդիրներին վերաբերող թվով 1-ին վեբինարը:

Վեբինարը վարում էր «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի հիմնադիր նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը:

Վեբինարի ընթացքում քննարկված թեմաները առավելագույնս արդիականացված և համապատասխանեցված էին սեքս-աշխատողների կարիքներին և հետաքրքրության շրջանակներին: Քննարկումը նվիրված էր այնպիսի թեմաներին, ինչպիսիք են COVID-19-ի ազդեցությունը սեքս-աշխատողների վրա, սեքս-աշխատողների շրջանում առողջության և առողջապահության հասանելիության սոցիալ-կառուցվածքային որոշիչները, այն հիմնական գործողությունները, որոնք պետությունը և շահագրգիռ այլ անձինք կարող են ձեռնարկել առողջապահության հասանելիության ապահովման համար:

Քննարկումը բուռն էր, քանի որ սեքս-աշխատողներից շատերը ներկա պահին չեն աշխատում և զուրկ են պետական աջակցությունից, որը հնարավորություն կտար սնունդ և հիգիենայի պարագաներ ձեռք բերել, ինչն էլ իր հերթին մի շարք առողջական լուրջ խնդիրների պատճառ է դառնում: Եվ քանի որ շատ սեքս աշխատողներ, ապրելով մարգերում, խնդիրներ են ունենում ինչպես բուժհաստատությունների հասանելիության հետ կապված, այնպես էլ բուժանձնակազմի խտրական վերաբերմունքին բախվելով, նրանց համար առավել հետաքրքրական էր այն հիմնական քայլերը, որոնք նրանք կարող են ձեռնարկել առողջապահական համակարգի բարեփոխման համար:

Այնուհետև, սեքս աշխատողներին հարց ու պատասխանի հնարավորություն տրվեց, որի ընթացքում նրանք հղեցին իրենց հուզող հարցերը՝ համապարփակ պատասխաններ ստանալով:

Վեբինարի ավարտին մասնակիցները շնորհակալ եղան այս հույժ կարևոր թեմայի քննարկման համար և պատրաստակամություն հայտնեցին հետագայում կազմակերպվելիք վեբինարներին մասնակցելու և ձեռք բերած գիտելիքները համայնքում տարածելու հարցում:

ԹԵԺ ԳԻԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հարգելի՛ հետևորդներ, սիրելի՛ ՏՐԱՆՍ և ԼԳԲԻՔ համայնք և համակիրներ, ուրախ ենք ձեզ տեղեկացնել, որ Իրավունքի կողմ իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը վերսկսում է իր թեժ գիծ ծառայությունը՝տրամադրելով իրավաբանական անվճար խորհրդատվություն և ներկայացուցչություն ոստիկանական բաժանմունքներում, նախարարություններում, դատարաններում:

Իրավաբանական թեժ գիծ ծառայությունը աշխատում է 24/7 ռեժիմով:

Հաշվի առնելով ՀԿ-ի ծանրաբեռնվածությունը՝ իրավական ներկայացուցչություն կապահովվի միայն պետական մարմինների հետ խնդիրներ ունենալու դեպքում, ներառյալ ոստիկանության, նախարարությունների, դատարանների:

Անհրաժեշտության դեպքում կիրականացվի նաև դատական ներկայացուցչություն:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎՃԱՐ Է:

Դուք կարող եք կապ հաստատել հետևյալ հեռախոսահամարով՝
+37493500339
Դուք կարող եք կապ հաստատել հետևյալ փոստային հասցեով՝
lawyer.rightsidengo@gmail.com
Նաև դիմել ֆեյսբուքյան էջին՝
Թեժ գիծ Իրավունքի Կողմ:

ՎԵԲԻՆԱՐ ՀԱՄԱՐ 5

Իրավունքի կողմ իրավապաշտպան ՀԿ-ն Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում Սեքս-աշխատողների իրավունքների պաշտպանության կազմակերպությունների ցանցի (SWAN) հետ համատեղ ավարտեց «Համայնքային հեռանկարներն ու արձագանքները տարածաշրջանում՝ սեքս-աշխատողների նկատմամբ հանցավորության, բռնության, խտրականության և բռնաճնշումների վերաբերյալ» թեմայով վեբինարների շարքը: Ընդհանուր առմամբ իրականացվեցին թվով 5 վեբինարներ, որոնք նվիրված էին «Սեքս-աշխատողների համար ծրագրերի իրականացման գործիք» (SWIT) ձեռնարկի քննարկմանը և ՀՀ կոնտեքստին հնարավոր համապատասխանեցմանը:

Վերջին՝ 5-րդ վեբինարի ընթացքում սեքս աշխատող ակտիվիստները ամփոփեցին նախորդ վեբինարների ընթացքում քննարկված նյութերը, ձեռք բերված փորձը, կուտակված գիտելիքները և հմտությունները՝ ի նպաստ սեքս-աշխատողների հմտությունների բարելավմանն ու իրենց իրավունքների վերաբերյալ գիտելիքների անընդհատականության ապահովմանը:

Վեբինարը վարում էին SWAN-ի կողմից հավաստագրված փորձագետները և Իրավունքի կողմ իրավապաշտպան ՀԿ-ի նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը, ովքեր, տարիների ընթացքում ձեռք բերված սեփական և համայնքային փորձի վրա հիմնվելով, հայ սեքս աշխատող ակտիվիստների հետ քննարկեցին ավելի բազմաբովանդակ, իմաստալից և արդյունավետ աշխատանք ծավալելու համար նախատեսվող հետագա գործողությունները:

Վեբինարի ավարտին քննարկվեցին նաև հետևյալ հարցերը.

-Գրքի ո՞ր գլուխն էր ավելի համահունչ մեր ծավալած աշխատանքին:
-Ի՞նչը պարզ չէր մեզ համար:
-Մեր խմբին ամենից շատ ո՞ր թեման էր հետաքրքիր:
-Ի՞նչ նոր գաղափարներ ունենք ձեռնարկի ադապտացիայի և սեքս-աշխատողների՝ համայնքային գործընթացներին իմաստալից կերպով ներգրավելու համար:
-Ի՞նչ ծառայություններ ենք մատուցում սեքս-աշխատողներին մեր կազմակերպությունում:
-Ի՞նչ ծառայություններ են սեքս-աշխատողներին մատուցում մեր երկրի մյուս կազմակերպությունները:

Այս դասընթացի արդյունքում Իրավունքի կողմ իարավապաշտպան ՀԿ-ն ընտրեց 4 լավագույն արդյունքները ցուցաբերած մասնակիցիներին, ովքեր իրենց հերթին կտարածեն ստացած գիտելիքները կրթատեղեկատվական վեբինարների և արշավների միջոցով:
Մենք բարձր ենք գնահատում SWAN-ի հետ համագործակցությունը, հավատում և համոզված ենք, որ բոլոր խնդիրները հնարավոր է լուծել միմիայն և բացառապես միասնական ուժերով, կառուցողական համագործակցությամբ և համայնքի ներգրավմամբ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՍԵՐԸ ՍՐՏՈՒՄ, ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԿՂՈՒՄ



Հարգելի հետևորդներ,
Ձեզ ենք ներկայացնում, մեր նոր սոցիալական հոլովակը:
Սույն տեսահոլովակը պատմում է «Իրավունքի կողմ» իրավապաշտպան Հասարակական Կազմակերպության կողմից իրականացրած «Սոցիալական մարդասիրական աջակցություն կորոնավիրուսի ծանր ժամանակներում» միջոցառման մասին, որի շրջանակներում օգնություն է տրամադրվել Երևանում և ՀՀ մարզերում ծայրահեղ ծանր վիճակում գտնվող Տրանսգենդեր և սեքս աշխատող համայնքին:

RIGHT SIDE
HUMAN RIGHTS DEFFENDER NGO

Համայնքին աջակցում ենք,
սերը սրտում, օգնությունը արկղում:

B | S | T The Black Sea Trust for Regional Cooperation
A PROJECT OF THE GERMAN MARSHALL FUND

#MyHealthAlsoMatters #CoronavirusFastResponseFund #BSTRSCooperation #RightSideNGO #Transgender-Armenia #FirstAndOnlyTransOrganisation

The German Marshall Fund of the United States.
Black Sea Trust for Regional Cooperation.

ԹԵԺ ԳԾԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

2020թ. հուլիսի 23-ին, առավոտյան ժամը 04:30-ի սահմաններում, տրանս - գենդեր կանայք Գ.-ն և Վ.-ն:

Երևանի «Փակ շուկա» կոչվող տարածքում հարձակման են ենթարկվել երեք այլ տրանսգենդերների կողմից: Տրանսգենդեր Գ.-ն ահազանգել է ոստիկանություն, որից հետո ժամանած ոստիկանները խտրական և կոպիտ վերաբերմունք են ցույց տվել Գ.-ի և Վ.-ի նկատմամբ:

Ոստիկանների ժամանելուց հետո, վախեցած տրանսգենդեր կանայք՝ Վ.-ն և Գ.-ն, չեն ցանկացել գնալ ոստիկանություն, ինչին ի պատասխան ոստիկանները հայտնել են, որ իրենց հետ չգնալու և բողոք չներկայացնելու դեպքում կենթարկվեն վարչական ձերբակալության՝ պոռնկությամբ զբաղվելու կասկածանքով: Չնայած տրանսգենդեր կանանց հորդորներին, ոստիկանները կոպիտ ձևով ձեռնաշղթաներ են հագցրել տրանսգենդերներ Վ.-ի և Գ.-ի ձեռքերին և ենթարկել վարչական ձերբակալման՝ ի հեճուկս նրանց խնդրանքներին թուլացնելով ձեռանշաղթաները, քանի որ դրանք շատ կոպիտ էին և վնասում էին ձեռքերը:

ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի կենտրոնական բաժնում փաստաբանի ժամանելուց և խորհրդատվություն տրամադրելուց հետո տրանսգենդեր Գ.-ն ներկայացրեց հաղորդում՝ իրեն ծեծի ենթարկելու փաստով, ինչպես նաև բողոքեց ոստիկանների գործողությունների դեմ: Միևնույն ժամանակ, «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն հետամուտ է լինելու ոստիկանների վատ վերաբերմունքը քննելու համար:

Ցանկանում ենք տեղեկացնել, որ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն վերսկսել է իր թեժ գիծ ծառայությունը՝ տրամադրելով իրավաբանական անվճար խորհրդատվություն և ներկայացուցչություն ոստիկանական բաժանմունքներում, նախարարություններում, դատարաններում: Իրավաբանական թեժ գիծ ծառայությունն աշխատում է 24/7 ռեժիմով: Կապ հաստատելու համար խնդրում ենք զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ +37493500339

RIGHT SIDE

HUMAN RIGHTS DEFFENDER NGO

www.RightSideNGO.com

rightsidengo@gmail.com

facebook.com/RightSideNGO/

twitter.com/RightSideNGO

instagram.com/RightSideNGO/

+374 - 11 - 880 - 770